արտաքին որակութեամբը այնպէս ուսնլի էր յարուցելոյն՝ ինչպէս սովորական կերակուրն, և ինչո՞ւ գմին կարենար ճաշակել և գմիւսն ոչ։

Հոս կը փակեմ առաջին երեկոյի ժողովման կամ Դ երեւման խնդիրը։

Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՑՈՒՆԻ

Տարայարեկի

## ԳԱՂՂԻԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

## ՖՐԱՆՍՈՒԱ ԿՈՓԷ

### ԴԱՐԲԻՆՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ

### (LA GRÈVE DES FORGERONS)

Գրեթէ կէսն հասած էի թարգմանութեանս, երբ իմացայ որ ողբացեալ Պ. Հ. Ադամեանի ձեռքով թարգմանուած է եղեր այն, և մի քանի անգամ արտասանուած։ Գտնելով այդ թարգմանութիւնը, 1880ին Թիֆլիս տպուած «Քերթուածք և թարգմանութիւնք» հատորին մէջ, կարդացի և բաղդատեցի իմ թարգմանութեանս և բնագրին հետ։ Ադամեան յանգաւոր թարգմանած է, որով և ստիպուած շատ տեղ հեղինակին մտքէն չանցած բառեր դնել։ Այս անճշդութիւններէն և տաղաչափական ու հասարակ անհարթութիւններէն զատ, կան բուռական սխալ հասկացողութիւններ ալ, որոնցմէ՝ օրինակի համար՝ քանի մը հատ կը դնեմ՝ թարգմանութեանս ներքևը։ Որով Ադամեանի թարգմանութիւնը՝ որ այնպէս ինչպէս որ է իրեն յարգը կրնայ ունենալ՝ արգելք մը չկրցաւ ըլլալ՝ առաջ տանելու սկսածս և հրատարակելու։ Ադամեանի աշխատութեան մէջ տեսնուած թերութիւններէն յանցաւոր եմ այդու ըլլալ, ո՞ւր էր թէ յաջողած ըլլայի։

Հ. Ա. ՂԱԶԻԿԵԱՆ

Պարոն դատաւորներ, իմ պատմութիւնս կարճ է:
Ահա: Գործադուլ էին ըրեր դարբինները.
Իրաւունք ալ ունէին: Ցրմերը խիստ սաստիկ էր.
Այն անգամ, թաղն ալ յոգնած էր անօթի կենալէն!
Շաբաթ օրը, շաբաթչէք վճարելու ժամուն,
Կը տանին զիս գինետունն մեզմով թեւէս բռնելով.
Ու, հոն, ամենէն աւելի ծեր ընկերներս
— Ես արդէն իսկ չուզեցի տալ ձեզ իրենց անուններն
Ինծ կ'ըսեն. «Վարպետ Ժան, կարողութիւն չըմբռ- (նաց.
Թող թոշակն աւելցընեն, թէ չէ՝ գործէ կը դադրինք.
Կը կրթեն ըզմեզ, և մեր միակ միջոցը սյս է:
Արդ կ'ընտրենք ըզքեզ իբրև մեր ամենէն ծերագոյնն,
Որ երթաս իմացընես գործատիրոջ, անխռով,
Որ եթէ չաւելցընէ մեր աւուրչէքը խեղճուկ,
Վաղուընէ սկսեալ ամէն օր կիրակի կը բռնենք:
Մեր մարդն ես, Վարպետ Ժան, յանձըն կ'առնո՞ւս»:
Կ'ըսեմ ես.
«Ինչու չէ քանի որ ընկերակցացս օգուտն է»:
Ես, պարոն նախագահ, խռով երբեք հանած չեմ*,
Հանդարտիկ ծեր մըն եմ, և շատ հաւատք ալ չունիմ
Այն սև ըզգեստներուն՝ որոնք կըրակը կու տան:
Բայց սակայն զուցէ չէի կարող մերժել զայն իրենց:
Ուրեմն այս անկարեւոր կ'երթամ տիրոջ դէպի (տունն:
Կը հասնիմ, սեղանի վրայ կը գտնեմ, ներս մըտ- (նելով,
Կը պատմեմ մեր նեղութիւնն ու բոլոր իր ան- (տեւանքներն,
Թէ շատ սուղ է հացը, ծանր են վարձքերն: Ու (կ'ըսեմ
Թէ մեր բանը լըմընցաւ. իրեն և մեր շահերուն
Շինելով հաշիւ մ' երկայն, ազնըւութեամբ կը կըն- (քեմ
Որ, առանց վնասու, կըրնար աւելցընել մեր վը- (ճարքն:
Ինծ հանդարտ մըտիկ ըրաւ կոտըրտելով կաղիններ,
Ու ըսաւ վերջ ի վերջոյ.
«Դու Վարպետ Ժան, ըստուգիւ
Պարկեշտ մարդ մ' ես, և անձնք որ ըզքեզ հոս (մըղեցին՝
Գիտէին ըրածնին ըզքեզ ընտրած ժամանակ.
Քեզ համար դարբնոցի՛ս մէջ տեղն երբեք պակաս չէ:
Բայց գիտցիր որ անոնց ուզած գին զի՛ս կը խեղդէ,
Գիտցիր որ կը փակեմ վաղը խանութս, ու բոլոր

* Այս երեք տողերուն գաղղիերէնն է.

Mon président, je n'ai pas fait de barricades;
Je suis un vieux paisible et me méfie un peu
Des habits noirs pour qui l'on fait le coup de feu.

Ադամեան կը թարգմանէ.

«Հաւատացէք, ո՜վ նախագահ, դարձուածք երբէք (չեմ ըրեր.
Հեզ ծերուկ մ' եմ, և համբերող... և միշտ զգոյշ (եմ եղեր
փաստաբանի սև զգեստէն զորս կը յղկեն երկաթով»:

Խնդիրը խռովութեան կամ յեղափոխութեան վրայ է. կ'ըսէ՝ ես հեզ մարդ մըն եմ, երբեք պատնէշներ չեմ շինած փողոցներու մէջ, և փաստաբաններու սև զգեստներէն ալ կը զգուշանամ, որոնք կը գրգռեն ժողովուրդը, իրար կը ձգեն, և իրենք մէկ կողմ կեցած կը դիտեն։ Չեմ ըմբռներ Ադամեան ինչ կը հասկընայ և ինչ կը հասկցընէ։

digitised by A.R.A.R.@

Խռովութիւն հանողներն՝ ամէնն ալ ծոյլ մարդիկ են:
Վերջին խօսքս այս է, կըրնաս երթալ ըսել զայն
(իրենց»:

Պատասխան կու տամ·

«Շատ լաւ, տէր»:

Կը մեկնիմ տըխրութեամբ
Հաղորդել ընկերներուս, ինչպէս որ խօսք էի տուած:
Իսկ հոն վե՛րն, աղմուկ, վէճեր քաղաքական խըռ-
(դըրոց վրայ,
Երդումներ, ա՛լ բընաւ ոտք չըկոխել գործատուն:
Թամբէ, ես ալ կ'երդուընոամ, ես ալ նըման հիններուն·
Ո՛հ, շատեր, այն իրկուն, երբ նետեցին քըսակնին
Սեղանին մէկ անկիւնն՝ ի տես իրենց ընտանեաց,
Տարակոյս չունիմ որ մէկն ալ սիրտն ուրախ չէր
(ըզգար·
Եւ ոչ ալ կըրցաւ քնանալ գիշերն ամբողջ, մտա-
(ծելով
Որ երկայն ատեն ստակի երես պիտի չըտեսնէր·
Եւ թէ պէտք պիտ՝ ըլլար ծոմ պահելու վարժըւիլ:
— Ինծ համար հարուածը խիստ եղաւ, զի եմ ծե-
(րացած,
Եւ միա՛կ ալ չեմ: — Երբոր տուն մըտնելով առի եմ
Ծունկերուս վըրան իմին երկու փոքրիկ թոռնիկներ,
— Փեսաս գէշ լըմընցուց, դուստրըս մեռաւ տղա-
(բերքին —*
Դիտեցի, մըտածկոտ, երկու փոքրիկ բերաններն
Որ իսկոյն քաղցը պիտի ճանչնային, ես կարմրեցայ
Երդուըլնցած ըլլալուս պարապ՝ անգործ կենալու:
Բայց միւսներն ալ չէին ինծմէ նըւազ ողբալի·
Եւ ի՛նչպէս մերոնք գիտեն պահել երդումնին
Միտքըս դրի տակաւին խօսքըս պահել, պարտքս
(ընել:
Պառաւ կինս այն ատեն լուացարանէն տուն եկաւ,
Կըտաւի թաց ծըրարին ներքեւ երկու տակ եղած·
Բանն իրեն վախկոտ դէմքով մ' հասկըցուցի, պատ-
(մեցի:
Եղկելի կինըս բընաւ բարկանալու սիրտ չունէր·
Մընաց երկայն ատեն անշարժ, աչերն սեւեռած
Սենեկին ոախտակամածն, յետոյ, «Ճի՛րիկ իմ, ըսաւ·
Դուն լա՛ւ գիտես որ ես խընայասէր կին մըն եմ.
Պէտք եղածը պիտ՝ ընեմ· բայց ժամանակը ծանր է,
Եւ շատ շատ տասնըհինգ օրուան բաւէ հացերնիս»:
Ցարեցի ես·

«Աստք գուցէ դարման մ' ըլլըի»:
Մինչդեռ ես գիտէի որ մի միայն մատնութեամբ
Կարելի էր ճար մ' ընել, և թէ դըժգոհ ընկերներս,
Որպէ՛ս զի աւելի երկայն տեւէ գործադուլն,
Գիտի լաւ հըսկէին և պատժէին մատնիչներն·

Եւ եկաւ թըշուառութիւնն: — Ո՛հ դատաւորք, դա-
(տաւո՛րք:
Լաւ գիտէք դուք որ յետին դըժբախտութեան մէջ
(անգամ
Ինծ երբեք կարելի պիտի չլինէր գող մ' ըլլալ,
Եւ մտածած ատենս անգամ՝ պիտ՝ ամօթէս մեռնէի·
Եւ ներքիմ պընդեմ թէ Պարկ է որ հաւատք ընծայուի
Նմյն իսկ յուսահատին, որ արտըսնէ մինչ իրկուն
Իրեն անյուսութիւնն աչքերուն մէջ կը դիտէ՝
Թէ երբեք չէ անցուցած իր մըտքէն չար խոր-
(հուրդներ·
Բայց սակայն երբ սառերու եղանակին խիստ ատենն,
Կը տեսնէր իմ պատուաւոր հին անծըս — ողջ
(գըրգիռներ —
Իմ արի ընկերոջ և իմ երկու թոռներուս
Երեքին ալ դողդոջելն վառարանին քովն անբոց՝
Մանկական այն ճիչերուն, կանացի այն արտա-
(սուաց,
Քարացած ցուրտին այն խըմբին հանդէպ սոսկալի,
Երբեք — կ'երդնում հոս, այս խաչն ըլլայ թող
(վըկայ —
Երբեք չերեւցաւ ըղեղիս մէջ մըթագին,
Փողոցի այդ գողունի գործը, այդ գործը վատթար,
Ուր սիրտը կը նետէ, աչքը դիտէ, ձեռքն առնու:
— Աւա՛ղ, գոռոզութիւնս եթէ հիմայ կը մեղմի,
Եթէ պահ մը ձեր առջեւ կը խոնարհիմ ու կու լամ
Պատճառն է, զի կը տեսնեմ կինս ու երկու թոռ-
(նիկներս **,
Անոնք՝ որոնց համար ըրի ես ի՛նչ որ ըրի:

Գէշ աղէկ անցուցինք առջի քերան օրերնիս
Կերանք չո՛ր հացն ու դըրինք ունեցածնիս գըրաւի·
Ես շատ կը տանջուէի: Խուցը վանդակ է մեզ համար,
Եւ մենք չենք կըրնար, չե՛նք վարժըւած տունը կենալ:
Հաւատացէք· ես ետքէն բանտը մօտէն դիտելով,
Մեծ տարբերութիւն մը չըգըտայ մէջերնին·
Ցետոյ, բան մը չընել՝ դարձեալ տանջանք է և այս·
Չըհաւատաք պիտի: Շա՛տ լաւ, պէտք է որ մէկը բըռնի
Քեռքերը ծալլէ, որ այն ատեն իմանայ
Թէ խանութը կը սիրէ, կը նախընտրէ աւելի
Խարտուքի ու կըրակի այն մըթնոլորտը խըղդուկ:

Տասնըհինգ օրուընէ վերջ մնացինք առանց ըստակի:
— Անցուցի այն ժամանակը քալելով խենդի պէս·
Միայնակ, ամբոխին մէջէն շիտակ երթալով,

* Mon gendre a mal tourné, ma fille est mor-
(te en couches.

Ազատօրէն կը թարգմանէ·

«Զի փեսաս գէշ վախճանեցաւ, մեռաւ աղջիկս ալ յ[illegible]»

** C'est que je les revois, ceux de qui tout à
(l'heure
J'ai parlé, ceux pour qui j'ai fait ce que j'ai fait,

Ազատօրէն կը թարգմանէ·

«Այն է պատճառն, որ [illegible] մեր-
(կանցամ,)
Միչտ անոնց[illegible], [illegible], ձմռան ցուրտին ենթակայ
[illegible], գործել չ[illegible] մ' անխնայ»:

Ընթերցողը հաճի պիտի նատաշայ թէ այս երեք
տողերը զաղղիերէն երկու տողին թարգմանութիւնն
ըլլան · և առերկին են:

digitised by A.R.A.R.@

Չի քաղքին ժըխորն ըզմարդ կը յափրացնէ, քնա-
(ցընէ,
Եւ ալքոհլէն աւելի քաղցը կու տայ մոռցընել:
Բայց անգամ մը ցուրտ, մըռայլ նոյեմբերի ամ-
(սուն մէջ
Երբոր տուն մըտնելով կէս օրէն ետքն ուշ ատեն
Տեսայ կի՛նըս կըծկած նըստած խուցին մէկ անկիւնն,
Երկու փոքրիկները սեղմելով իր կուրծքին,
Մտածեցի. ես եմ ես իրենց դահիճն ըսպանող:
Մինչ պառաւ կինս ինծի ըսաւ՝ հանդարտ ու գրեթէ
(ամըչկոտ.
«Խեղճ էրի՛կ իմ, գրաւատունը կը մերժէ, չ'ընդունիր
Վերջին անկողինն՝ իբրեւ շատ գէշ, անպիտան.
Հիմայ ո՞ւր պիտի երթաս հաց գըտնելու».
— «Կ'երթամ հո՛ն»,
Ըսի՛, ու բոլոր ոյժըս վըրաս ժողվելով
Միտքըս դրի որ երթամ նորէն գործի ըսկըսիմ.
Եւ թէպէտ մերժըւելուս վըրայ կասկած չունէի,
Բայց գնացի նախ և առաջ այն վաղեմի գինետունն՝
Ուր միշտ կը հաւքէին փողծաղուկին զըլխաւորք:
—Հաւտացէ՛ք ներս մըտնելուս երազ տեսնել կարծեցի.
Հոն իրենք կը տըննէին, մինչ անօթի էին այլք.
Գը խըմէի՞ն: Ո՛հ, թո՛ղ այն խմելու ստակ տըւողներն՝
Որ այսպէս կ'երկարէին այն անաւոր չարչարանքն,
Թո՛ղ լըսին ծերունւոյ մը դեռ զիրենք անիծելն:
— Դէպ ի այն խըմողներն երբ ըսկըսայ յառաջել,
Եւ աչքերըս տեսան կարմիր, ճակատըս կախուած,
Անոնք քիչ շատ հասկըցան թէ ինչ էր իմ ընելիքս.
Դէմքերնին թէպէտ տըխուր ու վարմունքնին թէ-
(պէտ խիստ,
Խօսեցայ սակայն իրենց.
«Կու գամ ձեզի ըսելու՝
Որ վաթսուն տարին անցած եմ ես, իմ կինս ալ
(նոյնպէս,
Որ երկու թոռնիկներս են իմ վըրաս մընացած.
Եւ թէ մեր խեղճ խուցի՛ն մէջ ուր կ'ապրինք լայ-
(նաբար՝
— Չի ծախուած են մեր բոլոր կա՛ն կարասիքն —
(հաց չունինք:
Ինծի նըման հէք աղքատին բաղդի պէս բան մ'է,
(կարծեմ
Անկողին մ'ունենալ հիւանդանոցն, ու դին ալ
Ցանծնել վիրաբուժի աշկերտին՝ դաս սորվելու.
Բայց սակայն թոռներուս ու կնոջս համար այսպէս
(չէ:
Ա՛րդ կ'ուզեմ միայնակ վերադառնալ գործատուն;
Բայց ամէն բանէ առաջ պէտք է որ դուք հրաման
(տաք.
Որպէ՛ս զի մարդ վըրաս պատմութիւններ չըշինէ.
Մազերըս ճերմըկցած են արդ, ձեռքըս սեւցած,
Եւ քառսուն տարիէ ի վեր կ'ընեմ դարբնութիւն.
Թոյլ տըւէք որ ես միայն գործատիրոջ քով դառնամ:
Մուրալ՝ չըկըրցայ, կ'արդարացնէ զիս հասակս.
Տըխուր բան է տեսնել մէկը որ կ'ըրէ ճակտին վրայ
Մուրճն անդուլ վերցընելու ճիգին փոխած կըն-
(ճիռներն,
Եւ ուզէ կարկառել զօրաւոր ձեռք մ'անցորդաց:
Կ'աղաչեմ ձեզ ձեռնամած: Խիստ անիրաւ բան
(չ'ըլլար*
Թէ որ էն ծերագոյնն էն առաջ ինձ զիջանի:
— Թոյլ տըւէք որ մի միայն ես գործատունը դառնամ:
Ահասիկ բոլորն, ըսէք, կը բարկանա՞ք ըսածիս»:

Անոնցմէ մին երեք քայլ ըրաւ դէպ ինծ ու 'սաւ
«Վա՛մս»:

Սիրտըս սառ կըտրեցաւ, արիւնն աչքերըս կուրցուց.
Նայեցայ երեսն ի վեր այն խօսքը ինծ ըսողին,
Մեծ մանչ մ'էր, գունատ դէմքով՝ կանթեղներու
ցոլքին պէս.
Ջարամիտ, կաքաւասէր, որ իր երկու ծնօտին վրան
Ունէր աղջկան մը պէս երկու խոշոր դիւթավարս.
Կը ծիծաղէր նա տընկելով հեգնող աչքերն իմ վըրայ,
Եւ միւսներն այնպիսի՛ խոր լռութիւն պահէին,
Որ մինչեւ կը լըսէի սըրտիս ուժգին բաբախիւնն:

Ցանկարծ սեղմեցի ճակատս երկու ձեռքիս մէջ,
Գոռալով.
«Մեռնի՛ն ալ կինս ու իմ երկու թոռնիկներս,
Ես սակայն պիտի չերթամ աշխատելու: — Բայց
(կ'երդնում,
Որ դուն այդ նախատանաց պէտք ես ընել հա-
(տուցում
Եւ մենք պէ՛տք է կըռուինք քաղաքացւոց նըման
(ճիշդ:
Ժա՞մ: Անմիջապէս: — Զէ՞նք. զէնքը ես պիտ՝
(ընտրեմ.
Եւ, է՛հ, զէնքը սալին թող ծանըրկեկ մուրճն ըլլայ**,
Մեր բազկաց համար թեթեւ սուրէ, գըրչէ աւելի.
Եւ դուք, ընկերներ, դուք ալ վըկայ պիտ՝ ըլլաք:
Հա՛պա, բոլորակը կազմեցէք, և գըտէք
Զոյգ մը մուրճ ժանգոտ, սա լաւ երկաթ ծեծող
(տեսակէն:
Եւ դու, ցած նախատիչ ծերունւոյ, ո՛ն, մերկացի՛ր***

---

* Je vous prie à deux mains. Ce n'est pas trop
(injuste
Que ce soit le plus vieux qui cède le premier.

Ագամեան կը թարգմանէ.

«Ո՜հ կ'աղաչեմ ձեզ ձեռնամած, անիրաւ չէ, ո՛չ, միթէ,
Որ ծերագոյնը ձեր մէջէն, ձեռք քաշէ թէ տամէ»:

** Mon heure? Sur-le-champ. — Mon arme? J'ài
(le choix:
Et, parbleu! ce sera le lourd marteau d'enclume,..

Ագամեան կը թարգմանէ.

«Ժա՞մն ուզածդ... հիմա է, ա՛յս ժամ, զէնքս ընտրի՛ր.
Գործաւորի մուրճ է ձեռաց, և կամ քիր:

*** Et, toi, vil insulteur de vieux! allons, dépouille
Ta blouse et ta chemise, et crache dans ta main.
Farouche . . .

Ագամեան կը թարգմանէ.

«Ալ դու, ո՛Տեղեր, դու ծերունւոյս նախատիչ,
Ո՛ն, մերկացի՛ր բաճկոնդ ու զգեստդ այդ մռայլ.

digitised by A.R.A.R.@

թաճկոնդ ու շալիկդ, և թուք երկու ափիդ մէջ»:

Կատղած, գործաւորները ճեղքելով արմուկով
Ճամբայ մ' ինծ բացի, և հոն պատին մէկ անկիւնն
Երկաթներու դէզին վրայէն երկու հատ մուրճ ըն-
(տրեցի.
Եւ մէկ ակնարկով վեր վար զանոնք գըննելով,
Նետեցի լաւագոյնն անոր որ զիս նախատեց:
Դիռ կը ծիծաղէր ու կը հեգնէր, բայց սակայն
Զէնքն առաւ, և պահելով պաշտպանողի դիրքը միշտ

« Համպա, ծեր, ըսաւ, խելօք կեցիր, շատ, մի' տըռ-
(տըռար.
Առանց բան մ' ըսելու սըրիկային՝ քալեցի
Դէպ ի նա, չարչըրկելով զինքը պարկեշտ նայուած-
(քովս,
Եւ գըլխուս վերեւ օդին մէջ ճօճելով ի պըտոյտ
Աշխատութեանըս գործին, պատերազմի զէնքըս՝
(ուռն:
Ծեծող խարազանին տակը կըծկող շունն երբեք
Շըլմորած աչքերուն մէջ որ նիրում կը խընդրեն,
Չունեցաւ արտայայտում մ' աղերսանքի նուաս-
(տագոյն
Քան զոր ես այն ատեն տեսայ աչքին մէջ այն չի'լ
Վախկոտին, որ խոժոռ կերպով ետ ետ քաշուելով,
Գընաց կըռթընեցաւ գինետունին պատին դէմ.
Բայց շատ ուշ էր, աւա՛ղ: Քօղ մը մոտոր կար-
(մրաներկ,
Մառախուղ մ' իջաւ արեան իմ մէջ և այն էակին,
Անո՛ր՝ որ սոսկումէն սարսափահար կը զոփար.
Եւ ես մէ՛կ հարուածով ջախջախեցի անոր գանկն:

Գիտեմ թէ սպանութիւն մ'է, 'ւ ամէնքն իս դա-
(տապարտեն.
Եւ չեմ ալ, ըստուգիւ, ուզեր որ դատըս քաշքըշուի,
Եւ պարզ ըսպանութիւն մը մենամարտ համարուի:
Ոտքերուս առջեւն էր ան, մեռած, ըղեղը թափուած.
Եւ ես՝ Կայինի խըղճի խայթերը բոլոր
Ցանկարծ աչքին առջեւ տեսնող մէկու մը նըման,
Հոն կեցած էի, աչքերըս ծածկելով ձեռքիս մէջ:
Այն ատեն ընկերներս ինծ մօտեցան դողալով,
Եւ զիս ուզելով ձերբակալել՝ ինծ դըպան.
Բայց անզօր շարժումով մը ցըրուեցի ես զանոնք.
Ըսելով. Թողուցէ՛ք, ես զիս մահուան դատապար-
(տեմ:
Հասկըցան անոնք: Իսկ ես իմին գըլխարկս առնելով
Իրենց կարկառեցի ստակ ժողվողի մը նըման.
«Կընոջս ու թոռներուս համար ազնիւ բարեկամք»:

Ծիրունի մ' անոնց յանձներ է հաւաքուած տասը
(ֆրանքն.
Ցետոյ ես գընացի ոստիկանին մատնել զիս:

Աւասիկ իմ ոճրին ամենապարզ պատմութիւնն,
Եւ կըրնաք իսկ մեծ բանի տեղ չըդընել այն խօսքերն՝
Որ պարոն փաստաբաններն ըսեն պիտի ձեզ ան-
(շուշտ.
Ես և ոչ մանրամասունքը պատմեցի եղածին,
Ցայտնի ցուցընելու համար ձեզի, որ երբեմն՝
Դըժընդակ պատահարներ կ'ըլլան գործի մը պատ-
(ճառ:
Նո՛յն հիւանդանոցն են այսօր իմ փոքրիկներ,
Ուր վիշտն իմ քաջարի վեհանձըն կինս ըսպաննեց:
Մի և նոյն բանն է ուրեմն ինծ համար բանտ կամ
(գըդան,
Կամ նո՛յն իսկ ներում, այսուհետեւ հոգս ալ չէ.
Շնորհակալ կ'ըլլամ ձեզ, թէ զիս դըրկէք կախաղան:

---

Օ՛ծէ ձեռքերդ. թողով չփէ, պատրաստուէ.
Հարուածներէս, չէ՛ւ ինչպինքդ պաշտպանէ:
Վայրենամտութեւ, վագրի մը պէս կատաղի»,... են, են:
Մայրը պետք չկայ. ուսանի բաւականն կը համարեմ
այսչափս: Զորոնք գրինք ոչ եթէ ի նախատինս թարգ-
մանչին, այլ որպէս զի ծրէ խօսուած չկարծուինք:

# ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԲԱՌԱԽՕՍՈՒԹԵԱՆ

(Շար. տես էջ 112)

## Բ

### ՔՆՆՈՒԹԻՒՆ ՍՈՒՉԱՎԱՅԻ ԲԱՐԲԱՌԻՆ

### ԳԼՈՒԽ Ա

### Ձայնախօսութիւն

(Phonetik)

ՍՈՒՉԱՎԱՅԻ հայ գաւառաբարբառն ու-նի ընդ ամէնը 46 ձայն, որ հետեւեալներն են.

1. Ձայնաւորներ՝ վեց.
ա, ե, է ը, ի, օ:
2. Երկատառ միաձայն ձայնաւորներ՝ երեք.
եօ. իւ, ու:
3. Երկբարբառներ՝ նոյնպէս վեց.
այ, և, էւ, իւ, իը. օյ:
4. Բաղաձայններ՝ երեսուն և մէկ.
բ, բ, գ, գ, դ, դ, զ, թ, ժ, լ, խ, խ, ծ, ձ, ձ, ղ, մ, յ, ն, շ, չ, չ, ռ, ս, վ, բ, ց, փ, ք, ֆ:

digitised by A.R.A.R.@